

վրաց համակրելի գրող և մանկավարժ Գոգեբաշվիլիի այս պատմութեամբը տարածուել է վրաց ընտանիքներում տասնեակ հազարներով: Ինչ է պատճառը աջողութեան:

Կախէթի վաշխան գիւղում ապրում էր իր հարստութեամբ յայտնի իշխան Զուրաբ Քարթուխիաձէն, որ ամուսնացել էր լարեփրտ, թոյլ կազմուածքով Մագդանի հետ: Մագդանը հիանալի ձայն ունէր, իսկ Զուրաբը գեղեցիկ կերպով թառ էր ածուծ: Նրանք ունէին Քէթօ անունով գեղեցիկ, կայտառ, ուրախ մի փոքրիկ աղջիկ:

Երկու լեզգիներ փախցնում ևն Դաղստան փոքրիկ աղջկան որ նրա հօրից յետոյ փրկանք ուզէին:

Երբ ծնողները իմացան այս դժբաղդութեան մասին մայրը ուշաթափուեց, իսկ Զուրաբն 20 ղինուած քաջերի գլուխ անցնելով չի կարողանում լազգիներին գտնել: Լեզգիները տանում են Քէթօին Դաղստան և կուսակալին խաբելով ասում թէ «այս երեխան ճանապարհին անտառում գտանք»:

Կուսակալը և իր կինը շատ սիրում են փոքրիկ Քէթօյին և որովհետև անզաւակ էին, վարձատրելով լեզգիներին վերցրին Քէթօին: Կուսակալը և իր կինը այնպէս քաղցր, սիրալի և փալաքշանքով էին վարում Քէթօյի հետ, որ շուտով մոռացնել տուին իր ծնողներին: Երկու-երեք տարուց յետոյ նա իր կական ծնողների տեղ էր ընդունում կուսակալին և նրա ամուսնուն: Մայրենի լեզուն Քէթօյի մէջ կամաց-կամաց տեղի տուաւ լեզգերէնին, Կախէթիայի զաւակը դառաւ Դաղստանի զաւակ:

Մի քանի ժամանակից յետոյ վշտաբեկ Զուրաբը իմանում է մի լեզգուց որ իր աղջիկը Դաղստանի կուսակալի մօտ է: Զուրաբը ապսպրում է նրան թէ «այդ աղջիկը իմ դուստրն է, որին ծածուկ փախցրել են. ինչ որ պահանջես կտամ, միայն թէ վերադարձնես»: Կուսակալը պատասխանում է. «Եթէ առաջուց զիտենայի, որ այս նրեխան ըո դուստրն է, ես ինքս կը վերադարձնէի, բայց այժմ արդէն ուշ է: Թէ ինձ և թէ կնոջս համար միակ ուրախութիւնն այս աղջիկն է. նա էլ մեզ շատ է սիրում, այս տեղերին սովորել է, ձեզ բոլորովին մոռացել է»:

Ուժով յետ խել Զուրաբին չի աջողում: Զուրաբը ծպտեալ գնում է մի հաւատարիմ լեզգու հետ Դաղստան:



կուսակալը բացակայում էր: Զուրաբին աջողւում է փախցնել անտառի մօտով անցնող Գէթօյին:

Գեթօն հասնելով իր ծնողների տունը վշտից տանջւում էր, ոչինչ չէր ուտում, լալով յիշում էր կուսակալին և նրա կնոջ, որոնց իր խակական ծնողների տեղ էր ընդունում: Իր շուրջը ամեն բան խորթ էր թւում: Միայն մօր օրօրօցի երգը վերջապէս նորոգեց նրա մօռացած մանկական յիշողութիւնները. յետոյ Գէթօն է լինում որ հաշտեցնում է և բարեկամացնում կուսակալին իր հօր հետ:

Այդպիսով սիրող սիրտը բախտաւորեցնում էր իր մերձաւորներին, ինչպէս մարդասիրութեան մի անսպառ աղբիւր:

Այդ սիւժետը ինձ յիշեցնում է Մայն-Րիդի պատմութիւններից մէկը, որի վերնագիրը այժմ մօռացել են. բայց յիշում եմ որ հնդիկների փախցրած աղջկայ մէջ ինչպէս սպիտակամորթ ծնողները կարողանում են յարուցանել մանկական յիշողութիւնները օրօրի երգով:

Պատմութեան իր մարդասիրական տենդենցով, հետաքրքրական հիւսուածքով և ոճով այնքան գեղեցիկ է որ իբրև ընթերցանութեան գրքոյկ յանձնարարելի է: Նկարներն էլ բաւական աջող են, ինչպէս և թարգմանութիւնը: